Թումանյանական քառյակի տաղաչափական առանձնահատկությունները

Սարոյան Նռանե

Հանգուցային բառեր. *հանգ, ներքին հանգ, արական հանգ, թեմատիկա, բանաստեղծական կայուն ձև, վանկ*

Գաղտնիք չէ, որ որքան իմաստնանում է մարդը, այնքան փորձում է քիչ խոսքերով շատ բան ասել: Նույնն է նաև բանաստեղծների դեպքում: Նմանատիպ կարծիք ունի նաև Հովհաննես Թումանյանը. «Գրողը հիսուն տարեկանից հետո նոր պիտի գրող դառնա. երբ որ հասունանում է, լցվում՝ էն ժամանակ պիտի նստի ու ստեղծագործի»[1]: Բանաստեղծները, տիրապետելով թեմատիկայի, ռիթմի, բառընտրության արվեստին, դիմում են բանաստեղծական առավել կարճ ձևերի օգնությանը՝ արտահայտելու համար հիմնականում փիլիսոփայական թեմաներ: Պատահական չէ, որ բանաստեղծական կարճ ձևը, եթե նույնիսկ արծարծում է սիրային, հայրենասիրական կամ բնապատկերային թեմաներ, ապա դարձյալ ուղղված է դեպի փիլիսոփայությունը: Սա ճիշտ է գրեթե բոլոր կարճ բանաստեղծությունների դեպքում: Կարճ ձևերը ընթերցողի կամ ունկնդրի զգացմունքների վրա չեն կարող ունենալ մեծ ազդեցություն, որովհետև արտասանելու ժամանակը խիստ սահմանափակ է: Իսկ փոքր ժամանակահատվածում հուզական վիճակը լարման բարձր մակարդակի հասցնելը դժվար է: Այլ է պատկերը, երբ արծարծվող թեման միաձուլված է փիլիսոփայության հետ և շեշտը հենց փիլիսոփայության վրա է դրված: Այս դեպքում բանաստեղծական կարճ ձևերը նույնացվում են թևավոր խոսքերի, ասացվածքների հետ: Մաթեմատիկորեն ասած՝ բանաստեղծական կարճ ձևը իրենից ներկայացնում է թեորեմ, որը բաղկացած լինելով քիչ թվով տողերից ու նախադասություններից, ենթադրում է երկար ապացույց. «...վերլուծություններ անելու ավելի շատ բան քառյակներն են տալիս՝ քան որևէ մեծ գործ»[2]: Այսինքն՝ այսպիսի

[1] Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 81:

[2] Նույն տեղում՝ էջ 231:

բանաստեղծությունը արտասանվում է կարճ ժամանակում, բայց դրան հետևող քննարկումը տևում է էականորեն երկար։

Կարճ բանաստեղծությունների տարատեսակ ձևեր գոյություն ունեն՝ քառյակ (ռուբայի), բեյթ, դիստիքոս, հոքու, թանկա, ծիեջու[3] և այլն։ Հայկական պոեզիայում ամենաշատ հանդիպողը քառյակն է։ Այն հետաքրքրել է մի շարք հայ բանաստեղծների, ինչպիսիք են Չարենցը, Իսահակյանը, Թումանյանը և այլք։

Առաջին էական առանձնահատկությունը, որ աչքի է զարնում Թումանյանի քառյակներին նայելիս, տողերի երկարությունն է։ Այս առումով Թումանյանի քառյակները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ կարճ տողերով քառյակներ (առաջին խումբ) և երկար տողերով քառյակներ (երկրորդ խումբ)[4]։

Առաջին խմբի քառյակներից մի քանիսը ունեն յուրահատուկ սկիզբ։ Այս քառյակների առաջին տողերը կազմված են մեկ կամ երկու բառ ունեցող նախադասություններից («Ա՛նց կացան...», «Վերջացա՛վ...», «Ո՞ւր կորան...», «Ե՛տ չեկավ...», «Ե՛տ եկե՛ք...», «...Կյանքն ահա.–»)։ Դրանցից առաջին երկուսը գրվել են 1890 թ., երեքը՝ 1916 թ. իսկ վերջինը՝ 1918 թ.։ Միևնույն ոճով գրված քառյակներում թեմանտիկ նմանություն ևս կա։ Հետաքրքրական է, որ հեղինակը ոչ թե փորձում է զգուշացնել, որ կյանքն անցողիկ է, այլ, որ այն արդեն անցել է.

Վերջացա՛վ...
Կյանքըս մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի՝ փուչ ելավ,
Ինչ խնդություն՝ վերջը ցա՛վ։

Ոչ մի հույս չի արդարացել։ Ստացվում է, որ բոլոր երազանքները իրականություն այդպես էլ չդարձան։ Բանաստեղծն արդեն գիտի, որ ոչ մի հույս չի արդարանում։ 1916 թվականին գրած քառյակներում շեշտը դրվում է ոչ թե անցած կյանքի, այլ այն մարդկանց վրա, ովքեր կյանքի հետ անցան.

---

[3] Չինական բանաստեղծական տեսակ, որը բաղկացած է չորս տողից։

[4] Ռ. Իշխանյան, Թումանյանի քառյակների լեզվական և տաղաչափական առանձնահատկությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1976, էջ 119։

Ո՞ւր կորան...
Մոտիկներս ո՞ւր կորան,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չտվին, լո՛ւռ կորան։

Եվ ի վերջո, հեղինակն ուզում է այն ժամանակների վերադարձը («Ե՛տ եկե՛ք...»), երբ դեռ հավատում էր հույսին, չնայած ներկայում գիտի, որ ոչ մի հույս չի կարող արդարանալ։

Վերոնշյալ քառյակները, բացի «Վերջացա՛վ...» քառյակից, ունեն a-a-b-a հանգավորում։ Սրանք և՛ թեմատիկ, և՛ տաղաչափական առումով սերտորեն իրար կապված ստեղծագործություններ են, և եթե հաջորդաբար կարդանք, տպավորություն կստեղծվի, որ մեկ ամբողջական բանաստեղծություն ենք ընթերցում. «Դրա պատճառը այլ հանգամանքների հետ գուցե և այն է, որ բոլոր քառյակները (երկուսի բացառությամբ) Թումանյանը գրել է ոչ թե իր ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում, այլ կյանքի վերջին վեց տարիներին՝ 1916-ից մինչև 1922թթ. ...»[5]։ Երկրորդ նմանությունն այն է, որ a հանգ ունեցող համարյա բոլոր տողերը վերջանում են բայով։ Բացառություն է «Վերջացա՛վ...» քառյակը, որտեղ բանաստեղծը առաջին և չորրորդ տողերը իրար կապել է բարդ հանգի[6] օգնությամբ (վերջացավ, վերջը ցավ)։ Իսկ «...Կյանքն ահա.-» քառյակում a հանգի ստեղծմանը ընդհանրապես բայեր չեն մասնակցում (ահա, մահ, ահ)։

«Ա՛նց կացա՛ն...», «Ե՛տ չեկավ...» և «Ե՛տ եկե՛ք...» քառյակները ունեն նաև ներքին հանգ, որը գտնվում է երկրորդ և չորրորդ տողերում՝ հատածին նախորդող վանկում.

Ա՛նց կացա՛ն...
Օրերս թրռան, ա՛նց կացան.
Ախ ու վախով, դարդերով
Միրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն։

---

[5] Նույն տեղում՝ էջ 113։

[6] Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1980, էջ 175։

Երկրորդ և չորրորդ տողերում ներքին հանգ ունենալը տրամաբանական է, քանի որ երկու տողն էլ ընդհանուր առմամբ լրիվ նույն իմաստն ունեն («Օրերս թրռան, ա՛նց կացա՛ն...Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն», «Գընա՛ց, գընա՛ց, ետ չեկավ...Գերի մընաց, ե՛տ չեկավ», «Գարնան վարար գետ եկե՛ք...Դարձե՛ք, իրար հետ եկե՛ք», «Մոտիկներս ո՞ւր կորան...Չեն չտվին, լուռ կորան»): Տողերում նույնն է նաև վանկերի քանակը. առաջին տողը ունի երեք, իսկ մնացած տողերը՝ յոթ վանկ (4+3):

Առաջին խմբի մնացած քառյակները վերոնշյալ քառյակներից տարբերվում են նրանով, որ բոլոր տողերն են կազմված յոթ վանկից: Այս քառյակները գրվել են 1916-1922թթ.: Թեմատիկ առումով սրանք նման են վերոնշյալ քառյակներին: Սակայն պետք է նկատել, որ թեման ընդլայնվում է: Կյանքը առաջ է գնում, բայց հեռվում ինչ-որ տեղ դեռ նույնությամբ պահպանվում են այն երևույթները, որոնց հեղինակը հրաժեշտ է տվել՝ կամա, թե ակամա.

Հիմի բացե՛լ են հանդես
Երգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի՛ ծղրիդներ,
Ո՞վ է լսում հիմի ձեզ:

Այս քառյակը ինքնին կարող է համարվել բանալի՝ հասկանալու համար մյուս քառյակները: Իմաստը, իհարկե, կյանքի պարբերական լինելու մեջ է: Ամեն բան կրկնվում է որոշակի պարբերությամբ: Առավել կարևոր է այն փաստը, որ բոլոր երևույթները, թեև կրկնվել են անթիվ անգամներ, բայց նույնքան հետաքրքիր են մնացել, որքան առաջին անգամ: Պատճառն այն է, որ ամեն ծնվող կյանքի համար տվյալ երևույթը նորություն է: Նույնպիսի թեմատիկա ունեն նաև «Հին աշխարհքը ամեն օր» (a-a-b-a) և «Հե՛յ ճամփաներ, ճամփաներ» (a-a-b-a) քառյակները: Սրանք, բացի թեմատիկ նմանությունից, ունեն նաև տաղաչափական նմանություններ: Նախ, բոլորը ունեն a-a-b-a հանգավորում, և տողերը կազմված են յոթ վանկից: Հետաքրքրական է, որ առաջին խմբի քառյակերի 99 %-ը ունի a-a-b-a հանգավորում: Սակայն, բացառություններ,

իհարկե, ևս կան։ Այսպես՝ «Ծով է իմ վիշտն, անափ ու խոր...» քառյակն ունի a-a-b-b, իսկ «Քանի՜ ձեռքից եմ վառվել...» և «Վերջացա՜վ...» քառյակները՝ a-a-a-a հանգավորում։ Հետաքրքիր պատահականությամբ երկու քառյակն էլ թեմատիկ առումով ևս իրար կողքի կարելի է դնել։ Երկուսն էլ բանաստեղծի մեծ մարդասիրությունն են հաստատում։ Թումանյանի համար կարևոր է ոչ միայն մարդասիրությունը, այլ նաև երկխոսությունը անհատի և ժողովրդի միջև. «Ժողովրդին խոսք ասողը խոշոր պիտի լինի...»[7]։

Այս խմբում հանդիպում են որոշ քառյակներ որոնք առաջին, երկրորդ և չորրորդ տողերում ունեն ներքին հանգեր, իսկ տողերի վերջում հանգաստեղծիչ գործը իրենց ուսերին վերցնում են մի քանի բառ.

Ինչքա՜ն ***ցավ եմ*** *(4)/* ***տեսել ես****, (3)*
Նենգ ու ***դավ եմ*** *(4)/* ***տեսել ես****, (3)*
Տարել, ներել (4)/ ու սիրել,– (3)
Վատը ***լավ եմ*** *(4)/* ***տեսել ես****։ (3)*

Ընդ որում, այս քառյակներում երկրորդ և չորրորդ տողերի իմաստները էականորեն տարբերվում են իրարից։ Կարևոր է նաև այն, որ ներքին հանգը տողերի չորրորդ վանկում է՝ հատածից անմիջապես առաջ։

Առաջին խմբի քառյակները, ինչպես տեսանք, ունեն տաղաչափական և թեմատիկ բազմաթիվ նմանություններ։ Տաղաչափական այն առանձնահատկությունները, որ հայտնաբերեցինք առաջին խմբի քառյակներն ուսումնասիրելիս, դրսևորված են նաև երկրորդ խմբում։ Բայց ահա այս երկու տեսակի քառյակները իրարից բաժանողը հենց թեմատիկան է։ Առաջին խմբի բանաստեղծություններում իշխում են անձնական զգացմունքները, որոնք հատուկ են յուրաքանչյուր անհատի։ Դրանք են՝ մարդասիրություն, կյանքի շրջապտույտ, կարոտ։ Երկրորդ խմբում անդրադարձ է կատարվում նաև մարդու անկատարելությանը, ագրեսիվությանը, արատներին, բացասական գծերին.

---

[7] Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 176։

Բերանն արնոտ մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան։

Հետաքրքրական է նաև այս քառյակների ստեղծման ժամանակաշրջանի ընտրությունը. «...վերջին քառյակները գրել եմ միշտ ձմեռը՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, ինչպես երևում է, դա ավելի հարմար ժամանակն է. վառարանիս կրա՞կն է տրամադրում, թե՞ դրսի ցուրտը, որ փակվում եմ սենյակումս։ Գրածներիս էլ մեծ մասը անկողնումն եմ գրել և գլխավորապես հիվանդ ժամանակ»[8]։

Երկրորդ խմբում տեղ գտած որոշ քառյակներ տողերում ունեն տասնմեկ վանկ («Բերանն արնոտ մարդակերը էն անբան...», «Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում...», «Աղբյուրները հնչում են ու անց կենում...», «Էնքան շատ են ցավերն ավերն իմ սրտում...», «– Էս է, որ կա...Ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր...»)։ Այս քառյակները հանգավորման տեսանկյունից տարբեր չեն։ Առկա է a-a-b-a հանգավորում։ Քառյակների գերակշիռ մասը՝ ավելի քան քսան քառյակ, տողերում ունի տասնհինգ վանկ։ Ավելանում է նաև Աստծո կերպարը, որը իսպառ բացակայում էր առաջին խմբի քառյակներում։ Եթե նախորդներում խոսվում էր կյանքի կրկնվող լինելու մասին, ապա արդեն դա երկրորդ պլան է մղված։ Ի վերջո կյանքը ոչ մեկին էլ չի մնում և այն ուղղակի պետք է վայելել.

...Կյանքըս թեթև տանուլ տրված գրրազ եղավ, անցկացավ...
...Խաղաղ անցիր, ուրախ անցիր, երկու օրվան էս ճամփեդ...
...Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի՛...

Բանաստեղծը շատ է խորհել կյանքի մասին և բարձրացել է մարդկային հարթությունից (...Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին...)։ Հասարակ մարդն արդեն ի զորու չէ նրան հասկանալ։ Բանաստեղծը գտնում է միայնությունը թոթափելու բանալին։ Նա զրուցակից է ընտրում Աստծուն։

---

[8] Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 225։

Ես շընչում եմ միշտ կենդանի աստծու շունչը ամենուր.
Ես լրսում եմ նրրա անլուռ կանչն ու հունչը ամենուր...

Թումանյանը պոետի ուսումնասիրող աչքը համեմատում է Աստծո աչքի հետ.

...Բանաստեղծին թողեց մենակ, մե՛ն ու մենակ իրեն պես,
Որ իրեն պես մրտիկ անի ամեն մեկին ու կյանքին։

Այս խմբի քառյակները հարուստ են հանգավորման տարբեր եղանակներով։ Գերիշխում են a-a-b-a և a-a-b-b հանգավորումները։ Յուրահատուկ հանգավորում ունի «Խայամն ասավ իր սիրուհուն» քառյակը.

Խայամն ասավ իր սիրուհուն.- «Ոտրդ ըզգույշ դիր հողին,
Ո՞վ իմանա ո՛ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...»
Հե՛յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի։

Քառյակը ունի a-b-b-b հանգավորում։ Սակայն ուշադիր լինենք հանգավորմանը մասնակցող տողերի վերջին բառերին՝ հողին, հիմի, հիմի, Խայամի։ Եվ որպես օրինակ նայենք a-a-b-a հանգավորում ունեցող քառյակները («Առատ, անհատ աստծու նըման...»՝ ես, ես, անհաշիվ, ես, «Արյունալի աղետներով, աղմուկներով»՝ ահարկու, ոսկու, խուռներամ, հոգու, «Տիեզերքում աստվածային...»՝ հոգին, հոգին, հեռավոր, հոգին)։ Երկու տեսակի քառյակներում էլ տողերից երեքը ունեն նույն հանգը։ Բայց a-a-b-a հանգավորում ունեցող քառյակներին նայելիս պարզ երևում է, որ b հանգը լրիվ տարբերվում է a հանգից։ Պատճառը վերջին վանկի ձայնավորի հետ է կապված։ Վերադառնալով քառյակին կտեսնենք, որ թեև այն ունի a-b-b-b հանգավորում, սակայն բոլոր տողերի վերջին վանկը ունի «ի» ձայնավոր, որն էլ հնարավորություն է տալիս մտածելու, որ այս քառյակի առաջին տողը ունի մոտավոր հանգ[9] և հանգավորումը էականորեն չի տարբերվում a-a-a-a հանգավորումից։ Այսինքն՝ կարելի է այն դասել a-a-a-a հանգավորում ունեցող քառ-

[9] Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1980, էջ 175։

յակների շարքը։ a-a-a-a հանգավորում ունի նաև «Հազար տարով, հազար դարով» քառյակը։ Սրա առաձնահատկությունն այն է, որ ներքին հանգերի և առաջին, երկրորդ, չորրորդ տողերի վերջում կրկնվող բառերի տեսանկյունից ունի a-a-b-a հանգավորում ունեցող քառյակներին բնորոշ հատկություններ։ Նայենք քառյակը ամբողջությամբ.

*Հազար տարով, հազար դարով առաջ թե <u>ետ</u>, **ի՞նչ կա որ**.*
*Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու <u>հավետ</u>, **ի՞նչ կա որ**,*
*Հազար էսպես ձներ փոխեմ, ձնը խաղ է **անցավոր**,*
*Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու <u>հետ</u>, **ի՞նչ կա որ**։*

Քառյակը ունի 4+4+4+3 տողեր, որտեղ ներքին հանգը առկա է առաջին, երկրորդ և չորրորդ տողերի նախավերջին հատածի մոտ (ետ, հավետ, հետ)։

Ներքին հանգը, ինչպես երևում է քառյակներից, բնորոշ է a-a-b-a հանգավորում ունեցողներին։ Պատճառն այն է, որ երրորդ տողը լրիվ այլ հանգավորում ունի, իսկ առաջին և երկրորդ տողերը հաջորդում են իրար և այսպես թե այնպես կապված են իրար հետ։ Մնում է միայն չորրորդ տողի հարցը։ Չորրորդ տողը առաջին և երկրորդ տողի հետ կապելը ստացվում է տողի վերջին վանկերի միջոցով։ Բայց միայն վերջին վանկի փոխարեն հանգավորելով նաև մի քանի բառ և օգտագործելով ներքին հանգեր այդ կապը ավելի է ամրապնդվում.

Աստծու բանտն են տաճարները – աշխարհքներում բովանդակ.
Իբր էնտեղ է ապրում տերը, պաշտողների փակի տակ։
Հարկավ՝ ազատ նա ժըպտում է ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր խեղճ ու կըրակ մարդու գործին ու խելքին։

Երրորդ տողը հիմնականում կա՛մ թեման ընդլայնում է այլ հանգի և նկարագրության հաշվին, կա՛մ երևույթին նայելու տեսանկյունն է փոխում։ Իսկ չորրորդ տողը եզրափակիչ, շրջանակող բնույթ ունի և շատ դեպքերում վերադարձ է կատարվում առաջին ու երկրորդ տողերի տեսանկյանը։

a-a-b-b հանգավորումը ներքին հանգի խնդիր չունի, քանի որ

միևնույն հանգ ունեցող տողերը միանգամից հաջորդում են իրար։ Այսպիսով իրար հաջորդող և նույն հանգ ունեցող տողերում ներքին հանգը հավելյալ գեղեցկություն կամ օգուտ չի տալիս։

Թումանյանի քառյակներում տողերը ունեն հետևյալ տեսքը՝ 4+4+3, 4+4+4+3, 4+4+4+4+3։ Քառյակներում գերիշխում է միայն արական հանգը։ Սրա պատճառը հավանաբար ուղղակի Թումանյանի նախընտրությունն է։ Թումանյանն ինքը խոստովանում է, որ շատ ժամանակ չի ունեցել՝ ամբողջովին նվիրվելու բանաստեղծելու գործին. «Ի՜նչ եմ գրել – մի քանի տող բան, էն էլ ձեռաց, ոտի վրա...»[10]։ Չնայած սրան՝ Թումանյանը, այնուամենայնիվ, խիստ է մոտեցել քառյակներին՝ անընդմեջ կատարելագործելով դրանք. «...այս շատ կարճ և առաջին հայացքից ինքնաբուխ և մեկ շնչով գրված չորսական տողերը բանաստեղծի հետևողական աշխատանքի, տվայտանքների և տքնանքի արդյունք են, որտեղ որևէ բառ, անգամ օժանդակ բայ իր տեղում տեսնելու հեռանկարի նպատակով հեղինակը ոչ թե մեկ, այլ մի քանի տարբերակներ է ստեղծել, համադրել, փորձարկել և ի վերջո գրի առել վերջնական տարբերակը»[11]։ Երբ բանաստեղծը նշում է, որ հարկավոր է «նոր բան տալ»[12], ի նկատի ունի ոչ միայն թեմայի արդիականությունը, այլ նաև ճիշտ բառը ճիշտ տեղում դնելը։

---

[10] Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 81։

[11] Աստղիկ Բեքմեզյան, Տողամիջյան ընթերցումներ, Երևան, 2016, էջ 254։

[12] Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 178։

Просодические особенности четверостиший Туманяна

Сароян Нране

Резюме

Ключевые слова: *рифма, внутренняя рифма, мужская рифма, тематика, твердая форма стиха, слог*

Целью статьи является анализ тех стихотворений Туманяна, которые он написал использовав восточные твердые формы стиха. Наша цель – раскрыть наиболее уникальные особенности стихотворений Туманяна. Основной метод, который мы использовали при написании статьи, является метод сравнения. Мы сравнили стихи Туманяна друг с другом, чтобы найти сходства и различия между ними.

В своих стихах он уделяет внимание таким темам, как любовь к родине, любовь к женщине, природа, философия. Не удивительно, что Туманян, зная всемирную литературу, также использует восточные твердые стихотворные формы, такие как катрен (рубаи). Темы, на которые Туманян сочинял свои стихи, понятны как армянам, так и инородцам, поскольку они дороги всем, а ритмика и разнообразные рефрены делают стихотворения Туманяна более мелодичными.

The Prosodic Features of Tumanyan's Rubais

Saroyan Nrane

Summary

Key words: *rhyme, internal rhyme, masculine rhyme, theme, fixed verse forms, syllable*

The aim of the article is to analyze those poems of Tumanyan, that he wrote using eastern fixed verse forms. Our task is to reveal the most unique features of Tumanyan's poems. The main method, that we used while writing the article, is the method of comparison. We compared Tumanyan's poems to each other in order to find out their similarities and differences.

In his poems he touches upon themes, such as love for a country, love for a woman, nature, philosophy. It's not a surprise, that Tumanyan, knowing foreign literature, also uses eastern fixed verse forms, such as quatrain (rubai). Themes, about which Tumanyan composed his poems, are understandable both to Armenians and foreigners, because everyone is familiar with them; the rhythm and various refrains make Tumanyan's poems more melodic.

Ներկայացվել է 19.08.2020 թ.
Գրախոսվել է 19.11.2020 թ.
Ընդունվել է տպագրության 27.11.2020 թ.